

«Հաստատված է»

**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում
Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան**

Կ Ա Ր Գ

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ
ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների (այսուհետ՝ հարցում) կազմակերպման սույն կարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ շրջանավարտներին համալսարանում մատուցված կրթական ծառայությունների որակի գնահատման կարգն ու պայմանները:

1.2. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումը ԵՊՀ ԻՄ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից է, որն իրականացվում է առցանց եղանակով:

1.3. Սույն կարգը հաստատվում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ:

2. ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Հարցմանը մասնակցում են ԵՊՀ ԻՄ բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգի բոլոր շրջանավարտները: Հարցումն անցկացվում է յուրաքանչյուր տարվա մայիս և հունիս ամիսներին:

2.2. Հարցման գործընթացը կազմակերպում և վերահսկում են ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչությունը և ֆակուլտետները:

2.3. Հարցմանը շրջանավարտի մասնակցությունը պարտադիր է,

2.4. Հարցումն իրականացնում է առցանց՝ ամփոփիչ ատեստավորման քննությունից հետո համակարգչային սրահում,

2.5. Շրջանավարտին ԵՊՀ ԻՄ դիպլոմի հավելված տրամադրվում է միայն հարցմանը մասնակցելուց հետո:

2.6. Հարցումն անցկացվում է սույն կարգին կից ներկայացված գնահատման հարցաթերթով (Հավելված 1), որում առաջադրված հարցերին շրջանավարտը պատասխանում է գնահատման 0-5 միավորանոց սանդղակով: Հարցաթերթի՝ կարծիքների և առաջարկների բաժնում, շրջանավարտը կարող է ներկայացնել նաև ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված առաջարկներ:

2.7. Հարցմանը մասնակցած շրջանավարտների անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է, իսկ հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ ձևաչափով:

3. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

3.1. Հարցման արդյունքները մշակվում են ԵՊՀ ԻՄ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում:

3.2. Հարցման արդյունքների վերլուծությունն արտացոլվում է տարեկան զեկույցում, որը պարունակում է եզրակացություններ ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ և ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումներին ուղղված առաջարկներ՝ կոնկրետ ուղղությամբ իրենց գործունեության բարելավման վերաբերյալ: Տարեկան զեկույցում ներկայացված առաջարկները մեկամսյա ժամկետում քննարկվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում:

3.3. ԵՊՀ ԻՄ այն ստորաբաժանումները, որոնց գործունեության վերաբերյալ հարցման արդյունքում բացահայտվել են թերություններ, տարեկան զեկույցի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում ԵՊՀ ԻՄ տնօրենին պետք է ներկայացնեն իրենց ստորաբաժանման աշխատանքի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագիր, որը ենթակա է պարտադիր կատարման:

3.4. Աշխատանքի բարելավման գործողությունների ծրագրի արդյունավետ և նպատակային իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ԵՊՀ ԻՄ որակի ապահովման կենտրոնը:

Հավելված 1.

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏ-2018
ՀԱՐՑՈՒՄ**

Մի րեկի՝ շրջանավարտ, այս հարցման նպատակն է՝ բարելավել կրթության որակը մեր մասնաճյուղում: Ձեր անկեղծ և անաչառ կարծիքը կնպաստի այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկելուն և իրականացնելուն:

Հարցումն անանուն է, և տվյալներն օգտագործվում են զուտ ընդհանրական, վիճակագրական տեսքով: Հարցաշարի հարցերին պատասխանելիս խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ մեր գիտական ընդհանրացումներն ու հետևությունները կառուցվում են ձեր պատասխանների հիման վրա:

Կանխավ շնորհակալություն Ձեր անկեղծ պատասխանների համար:

I

1. Աշխատու՞մ եք արդյոք.

ա/աշխատում եմ՝ իմ մասնագիտությամբ;

բ/աշխատում եմ՝ այլ մասնագիտությամբ

գ/չեմ աշխատում

2. Եթե չեք աշխատում, հայտնի՞ է արդյոք, թե ապագայում որտեղ եք աշխատելու.

ա/ այո՝ իմ մասնագիտությամբ;

բ/այո՝ մեկ այլ մասնագիտությամբ;

գ/ոչ:

II

Այժմ խնդրում ենք պատասխանել մի քանի հարցի կրթական ծրագրերից, ուսումնական գործընթացի կազմակերպումից Ձեր բավարարվածության վերաբերյալ //գնահատում եք 5 բալանի սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր /գերազանց/ գնահատականն է, 4-ը՝ լավ, 3-ը՝

բավարար, 2-ը՝ անբավարար /ամանացածրը/. պատասխան չունենալու կամ դժվարանալու դեպքում նշում եք՝ 0//.

1. Ուսումնառությունը մասնաճյուղում որքանո՞վ է նպաստում մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը.

0 2 3 4 5

1.1. Դուք գտնու՞մ եք, որ դարձել եք լիարժեք մասնագետ.

0 2 3 4 5

2. Ուսումնառությունը մասնաճյուղում որքանո՞վ է տալիս տեսական գիտելիքներ.

0 2 3 4 5

2.1. Դուք համարում ե՞ք, որ ունեք լիարժեք տեսական գիտելիքներ.

0 2 3 4 5

3. Ուսումնառությունը մասնաճյուղում որքանո՞վ է տալիս գործնական հմտություններ.

0 2 3 4 5

3.1. Դուք համաձա՞յն եք, որ ունեք անհրաժեշտ գործնական հմտություններ.

0 2 3 4 5

4. Դուք համաձա՞յն եք, որ ուսումնառությունը մասնաճյուղում ապահովում է օտար լեզուների անհրաժեշտ իմացություն /նշել միայն մեկ պատասխան/.

0 2 3 4 5

4.1. Ըստ Ձեզ՝ որքա՞նով եք տիրապետում օտար լեզուներին.

0 2 3 4 5

6. Որքանո՞վ է պրակտիկական նպաստել մասնագիտական որակների ձևավորմանը /նշել միայն մեկ պատասխան/.

0 2 3 4 5

7. Ըստ Ձեզ՝ ուսումնառության ընթացքում Ձեր ստացած գնահատականները որքանո՞վ են համապատասխանում Ձեր իրական գիտելիքներին /նշել միայն մեկ պատասխան/.

0 2 3 4 5

8. Դուք ուսումնառության ընթացքում հանձնել եք բազմաթիվ ամփոփիչ քննություններ, որոնք տվյալ դասընթացների գծով ձեր ընդհանրական գնահատականներն են, պաշտպանել եք ա-

վարտական աշխատանք: Եթե ընդհանրացնենք, որքանո՞վ են Ձեր գնահատականները եղել արդար ու Ձեզ համար ընդունելի /նշել միայն մեկ պատասխան/.

0 2 3 4 5

9 Որքանո՞վ էր օբյեկտիվ ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքների պաշտպանություն)

0 2 3 4 5

III

Այժմ խնդրում ենք նշել Ձեր գնահատականը՝ կապված մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսների ու օժանդակ ծառայությունների աշխատանքի հետ:

.Ուսումնառության ընթացքում որքանո՞վ եք բավարարված եղել.

1. Լսարանների կահավորանքից.

0 2 3 4 5

2. Համակարգչային սրահների կահավորանքից.

0 2 3 4 5

3. Համակարգչային սրահների մատչելիությունից /այսինքն հազվադեպ է եղել, երբ ցանկացել եք օգտվել այդ սրահների ծառայությունից ու դա Ձեզ չի հաջողվել/.

0 2 3 4 5

4. Համացանցի /ինտերնետի/ մատչելիությունից՝ վերոնշյալ իմաստով.

0 2 3 4 5

5. Համացանցի /ինտերնետի/ արագությունից.

0 2 3 4 5

6. Ուսումնական լաբորատորիաների ապահովվածությունից /նշել միայն մեկ պատասխան/.

0 2 3 4 5

7. Մասնագիտական գրականության մատչելիությունից /առկայությունը գրադարանում, ամբիոնում, տրամադրումը դասախոսների կողմից/.

0 2 3 4 5

IV

Խնդրում ենք գնահատել Ձեր բավարարվածությունը մասնաճյուղային միջավայրից՝ կապված Ձեր ուսումնառությունը կազմակերպող կառույցների աշխատանքի հետ: Ուսումնառության տարիների ընթացքում, Ձեր ուսման ու անձնական կյանքին վերաբերող հարցերով Դուք բազմիցս դիմել եք համապատասխան կառույցներին: Որպես ընդհանուր ստավորություն ու գնահատական՝ որքանո՞վ են Ձեզ բավարարել նրանց վերաբերմունքը.

1. Դեկանատի անձնակազմի

0 2 3 4 5

2. Ամբիոնի անձնակազմի.

0 2 3 4 5

3. Ձեզ դասավանդած դասախոսների.

0 2 3 4 5

4. Ուսանողական խորհրդի.

0 2 3 4 5

5. Ուսանողական գիտական ընկերության.

0 2 3 4 5

Մի քանի նրբին ու պատասխանատու հարց, որը վերաբերում է մասնաճյուղի, դասախոսների հետ Ձեր ոչ պաշտոնական հարաբերություններինը: Հիշեցնում ենք, որ մեր հարցումը անանուն է, իսկ կազմակերպիչները ապահովում են անձնական կարծիքի անդեմությունը/.

1. Ձեր ուսումնառության ընթացքում եղե՞լ են դեպքեր, երբ Դուք գումարի դիմաց ստացել եք դրական գնահատական /քննություն, ստուգարք, կուրսային աշխատանք և այլն/.

0 2 3 4 5

2. Ձեր ուսումնառության ընթացքում եղե՞լ են դեպքեր, երբ միջնորդությամբ, առանց գումարի /բարեխոսությամբ/ ստացել էք դրական գնահատական /քննություն, ստուգարք, կուրսային աշխատանք և այլն/;

0 2 3 4 5

3. Ձեր ուսումնառության ընթացքում եղե՞լ են դեպքեր, երբ փոխադարձ համաձայնությամբ վճարի դիմաց դասախոսների հետ մասնավոր պարապմունքներ էք անցկացրել, որպեսզի ստանաք դրական գնահատական /քննություն, ստուգարք, կուրսային աշխատանք և այլն/.

0 2 3 4 5

V

1. Եթե փորձեք գնահատել մասնաճյուղում ուսուցման կազմակերպումը, տվյալ գործընթացի դրական/ցանկալի/ ո՞ր երեք կողմերը հատկապես կուզենայիք ընդգծել՝ ըստ կարևորության.

1.-----

2.-----

3.-----

2. Իսկ ո՞ր բացասական կողմերը կփոխեիք.

1.-----

2.-----

3.-----

3. Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին /ընկերներին/ սովորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում.

Այո

Ոչ

VI

Միբեւի՛ շրջանավարտներ, մասնագիտական հիմնավորված նպատակներով մեզ հետաքրքրում է, թե վերոնշյալ հարցերի պատասխաններում ինչպիսի առնչություն կամ տարբերություն գոյություն ունի տարբեր մասնագիտությունների, առաջադիմության, սեռերի ուսանողների պատասխաններում: Այս առումով խնդրում ենք հայտնել մի շարք անձնական բնույթի տվյալներ.

1. Ձեր մասնագիտությունը /նշել/.

- Հայոց լեզու և գրականություն
- Պատմություն
- Անգլերեն լեզու և գրականություն
- Ֆրանսերեն լեզու և գրականություն
- Մանկավարժություն և հոգեբանություն
- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
- Քարտեզագրություն և կադաստրային գործ
- Դիզայն
- Կիրառական արվեստ
- Տնտեսագիտության տեսություն
- Սերվիս

2. . Ձեր սեռը

ա/արական

բ/իգական

3. Ուսուցման ո՞ր համակարգում եք սովորել.

ա/առկա

բ/հեռակա

4. Պատրաստվո՞ւմ եք Ձեր ուսումը շարունակել՝ մագիստրատուրայում.

ա/այո;

բ/ոչ

6.5. Ձեր ուսումնառության միջին որակական գնահատականը /ՄՈԳ/.

8-10; 11-13; 14-16; 17-20

Վերոնշյալ հարցերի առնչությամբ Ձեր պատասխաններից բացի, ուրիշ էլ ի՞նչ կուզեիք ասել, առաջարկել /նշեք ազատորեն/.

Շնորհակալություն մեր հարցմանը մասնակցելու և անկեղծ պատասխանների համար: